Զմայրն աղէկիզ՝ անդ էր տեսանել տեսիլ ինն սխրալի առաջի դասուց սեւազգեցից պարագլուխ զընթանալն բացերեսօք, այն՝ որ երից թագաւորացն էր նազելի՝ չքնաղագեղն Օլոմպիա։ Ըստ որում խումբք ժողովոյն յերկուց կողմանց խուռն ընթանային՝ զպէսպէս դիպուած տեսլեան մօր տիեզերակալին, զի այսօր համարձակ թխասքօղ եղեալ, ի սենեկէ մինչ ի մէգարբստան համբարձեալ զձեռս, շարժեալ զգլուխս՝ ոչ միայն բանականաց՝ այլ եւ առ լերինս աղաղակէ թէ Լալակից եղի՛ք ինձ որդեկորուսի. եւ այլ բլուրս ձայն բարձեալ բողոքէ՝ Լի՛ք ողբակից մօրս կարօտելոյ աշխարհակալի։ Ոչ յոյս ունիմ ի մտի՝ թէ այնպէս ծնանիցի որդի, եւ ոչ գոյ նման նմա այլ ի համայն աշխարհի, կամ թէ եւ այն ինձ լինիլ մարթիցի։ Համեստապատկառն զիմօք կարկառէ զձեռս ընդ ժողովս մարդկան՝ ասէ. Ամօթն իմ բարձաւ, մի՛ լինիք ինձ մեղադիր, զի թագաւորն ձեր զվախճան է առեալ յերիտասարդական տի, անտես աչաց իմ կրկին վտանգաւ ի տարաշխարհի, ի հիմնաւերն այն ի Բաբիլոնի. իսկ ճչօղս, սեւազգեաց առաջնորդ արջնաթուրս պարուց ի ներ ցասումս դառնացեալ կոծիւ ծնօղն եմ Օլոմպիայ՝ հրաչակեալն զժխոյ եւ արդ եղկելի, ողորմ ու լալի։ Ա՜յ դստերք Մակեդոնացւոց, զի՞ կայք լքեալք, լուծեալք, պշուցեալք ի նոր զարմացմունս ձայնի՝ անլուր ողբերգութեան թագաւորի։ Օգնեցէ՛ք ի ձայն ողբոյ ինձ տառապելոյս. զքարակարկառս եւ զհողաբլուրս, ըզծառս եւ զթուփս ի բողոք գուժիս ինձ յորդորեցէ՛ք։ Վասն որոյ եւ կուսանացն յաւաղելն աղէտիւ զարեւմանկութեան եւ զբարձրաճոխութեան տիեզերակալին եւ երգողք ըստ ժամանակին եւ յաւուրն յարմարեալ ի փողոցս նուագէին դամբռամբ, որպէս երբեմն Արշակունեանցն Արտաշիսի եւ զենմանն Թորոսի եւ գերութեան Լէոնի ի Հայաստան՝ պիր զէման։ Վասն որոյ